Ազգ
Azg
5 ՅՈՒՆԻՍ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 92(5175)
ISSN: 1829-1651

# Ցեղասպանությունների ուրացումը քրեականացնող օրինագիծ Հունաստանի խորհրդարանում

## *Օրինագիծը ներկայացրել է երկրում իշխող կուսակցությունը*

Խնդրո առարկա օրինագիծն իրականում մշակվել էր ռասիզմի դեմ պայքարի նպատակով, որն այնուհետեւ լրացրել է ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ուրացումը քրեականացնող հոդվածով: Հոդվածը 3-36 ամիս կալանք եւ 5-20 հազար եվրո տուգանք է սահմանում նրանց, ովքեր կարհամարհեն կամ կնսեմացնեն Հունաստանի ընդունած ցեղասպանությունները:

Հիշեցնենք, որ Հունաստանի խորհրդարանը 1994-ին ճանաչել էր «Պոնտոսի հույների», 1996-ին՝ «1915-ի Հայոց», իսկ 1998-ին՝ «Փոքր Ասիայի» ցեղասպանությունները: Այս ամենին «Ցեղասպանության վիճելի օրինագիծ» վերնագրով հունիսի 3-ին անդրադարձել է թուրքական էլեկտրոնային «Հաբերլեր» թերթը, մեկնաբանության համար դիմելով Ռազմավարական հետազոտությունների միջազգային կենտրոնի Եվրոմիության գծով փորձագետ Մուստաֆա Քութլային:

Փորձագետը նշել է, որ համանման բանաձեւերը նախկինում էլ ներկայացվել են Հունաստանի խորհրդարան, վերջին օրինագծի նախաձեռնողը երկրում իշխող «Ժողովրդավարության» նոր կուսակցությունն է, օրինագիծը իբրեւ «ցեղասպանություն է բնութագրում հայկական պնդումները, քեմալականների ազատագրական պատերազմը»: Սա, ըստ թուրք փորձագետի, նշանակում է, որ Հունաստանը քաղաքականություն է ձեւավորում, ելնելով պատմության սեփական ընկալումից, խորհրդարանին ներկայացված օրինագիծը հայկական հարցի առնչությամբ Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած օրինագծի մյուս տարբերակն է:

Այնուհետեւ Քութլայը շարունակել է. «Խնդրո առարկա օրինագիծը հակասում է ԵՄ-ի արժեքներին եւ մարդու իրավունքներին: Օրենքի ուժ ստանալու դեպքում լուրջ հարված է հասցնելու Հունաստանում խոսքի ազատությանը: Այս օրինագծով հույն քաղաքական գործիչները փորձում են սեփական ժողովրդի ուշադրությունը շեղել տնտեսական ճգնաժամից: Հունաստանում հետզհետե ուժեղանում են ռասիստական հակումներն ու այլատյացության դրսեւորումները: Օրինագիծը խոսքի ազատությանը հակասում է նաեւ միջազգային տեսանկյունից: Խորհրդարանները չեն կարող օժտված լինել ազատությունները սահմանափակելու լիազորություններով: Նրանք պատմական իրադարձությունների առնչությամբ վճիռ կայացնելու իրավունք չունեն»:

Այս խոսքերը Թուրքիայում հաճախ են ծամծմվում: Ինչ վերաբերում է պատմական իրադարձություններին եւ խորհրդարանների առնչություններին, որոնց անհամատեղելիությունը անընդմեջ շեշտում են նաեւ թուրք պետական, քաղաքական եւ գիտական գործիչները, ապա պետք է նշել, որ «Ցեղասպանությունների կանխարգելման եւ պատժման» կոնվենցիան ընդունել է ՄԱԿ-ը, նկատի առնելով այն, որ դա հանցագործություն է ընդդեմ մարդկության: Եթե ցեղասպանությունները լինեին պատմաբանների խնդիրը, ապա ցեղասպանության կոնվենցիան ՄԱԿ-ի փոխարեն կընդուներ որեւէ հեղինակավոր համալսարանի պատմության ինստիտուտը:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Ազատվել «հաբռզածներից»

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Ինչի՞ համար են տեղական կառավարման մարմինները ու նրանց գլուխները, ասենք՝ մարզպետները: Արդյո՞ք նրա համար միայն, որ պետական դոտացիան բաշխեն ըստ իրենց հայեցողության, թիկնազոր պահեն՝ պահպանելով սեփական անձեռնմխելիությունն ու իրենց ապարանքը, սեփական բիզնեսը ծաղկեցնեն՝ պաշտոնը կտուր դարձնելով, թե՞ նրա համար, որ մարզի բնակչության խնդիրները լուծեն, ապահովեն արդար Հայաստանի մարզային մակարդակը: Այդ թվում՝ ապահով ու անվտանգ միջավայր ստեղծեն բնակչության համար, բացառեն «ռազբորկաները», սպանությունները: Իսկ եթե դա չեն կարողացել իրականացնել՝ հրաժարական ներկայացնեն: Այնպես որ անհասկանալի է Սյունիքի մականունավոր մարզպետի տարածած հայտարարությունը, թե ամեն մեկն իր կատարածի համար պիտի պատասխան տա: Անգամ եթե անձամբ ինքը չի խառնված հանցագործությանը եւ, ինչպես ինքն է ասում, չի կարողացել կանխել իր առանձնատան մոտ տեղի ունեցած ողբերգությունը, ապա չի կատարել իր պաշտոնեական պարտականութունները եւ հենց պետք է հրաժարական տա: Եվ ոչ թե ժամանակավորապես դադարեցնի իր լիազորությունները մինչեւ նախաքննության ավարտը: Կամ մեր ինչի՞ն է պետք մի մարզպետ, որի թիկնապահները հսկում են իր առանձնատունը՝ եթե լավ կառավարիչ է, ժողովուրդն իրենից չի վախենում, օրինակարգ է՝ ի՞նչ պատճառ ունի «պահպանվելու», կամ մեզ մի՞թե այդպիսի տեղական կառավարիչ է պետք, որ թիկնազորով է պարսպապատվում իր ժողովրդից: Ուրեմն՝ անկախ ամեն ինչից, դա վատ կառավարիչ է, եւ նրանից պետք է ազատվել՝ հանուն Հայաստանի քաղաքացի սյունեցիների: Անկախ տխրահռչակ եւ սկանդալային պատմություններից: Ահա այս դառն զգացումն է պարուրում սովորական մահկանացուին՝ վերջին օրերի լրահոսին հետեւելով:

*Տես էջ 3*

# Դիվերսիա Քարվաճառում. թշնամու կողմից կան վիրավորներ

**Ամենայն հավանականությամբ զորակոչի ընթացքով պայմանավորված՝ ԼՂՀ շփման գծում, Քարվաճառի ուղղությամբ, հակառակորդը դիվերսիոն հարձակում է իրականացրել: «Ազգ»-ի տեղեկություններով՝ թշնամու 10-12 հոգանոց խմբի հետ բախումը տեղի է ունեցել բաց տարածքում: Բախումը տեւել է 10-15 րոպե, հայկական կողմը կարողացել է հետ շպրտել ադրբեջանական բանակի դիվերսանտներին: Ադրբեջանական կողմը զոհեր չի տվել, սակայն ունեցել է վիրավորներ: Մեր զինծառայողներից մի քանիսը մարմնական թեթեւ վնասվածքներ են ստացել. լուրջ վիրավորներ կամ զոհեր հայկական կողմը չի տվել:**

**ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի փոխանցմամբ՝ հակառակորդն այս օրերին իրեն դրսեւորել է նույն կերպ: «Սահմանին միշտ փորձում է առաջացնել նոր լարումներ, սակայն ստանում է արժանի հակահարված եւ հետ շպրտվում: Եղածի պատասխանատվությունը կրում է հակառակորդը: Զինված ուժերը լիովին վերահսկում են իրավիճակն ու ոչ մի կորուստ չեն ունեցել»:**

Հ. Հ.

ՇԻՐԱԿ

# Աղետից հետո 50-հազարերորդ երեխայի ծնունդը

**Անցած շաբաթ օրը՝ հունիսի 1-ին, Գյումրու ծննդատանը հանդիսավոր նշվել է 1988-ի դեկտեմբերյան աղետից հետո 50-հազարերորդ երեխայի ծնունդը: Փոքրիկ Հայկը, որը լույսաշխարհ է եկել դրա նախորդ երեկոյան, չորս կիլոգրամ քաշով, քաղաքամերձ Ղարիբջանյան գյուղի բնակիչ Հովհաննիսյանների ընտանիքի երրորդ զավակն է:**

**Ծննդատուն այցելել, նորածնի ծնողներին շնորհավորել եւ 100 հազար դրամ են նվիրել Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանն ու Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը, մարզպետը փոքրիկի համար նաեւ մանկասայլակ էր անձամբ ընտրել ու գնել: Փոքրիկ Հայկն ու նրա ծնողները նվերներ են ստացել նաեւ այլ կազմակերպություններից ու անհատներից: Մարզպետն ու քաղաքապետը շրջել են ծննդատան սենյակներով, ծաղիկներ ու նվերներ հանձնել օրվա 13 նորածինների մայրերին: Ծնունդներից 9 տղա երեխաներ են եղել, 4-ը՝ աղջիկ:**

**... Հայտնի չէ միայն, թե այս քսանհինգ տարիներին ծնված 50 հազար երեխաներից քանիսն են առ այսօր իրենց ընտանիքներով շարունակում ապրել Հայաստանում:**

Գ. Մ.

# Դիմորդ. «Պետք է ներառվեին հարցեր, որոնք ոչ թե մեխանիկական անգիրի, այլ ջանասիրաբար աշխատելու տեղիք կտային»

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Երեկ տեղի ունեցավ հայոց լեզվի եւ գրականության միասնական քննությունը, որին մասնակցում էին 9000 դիմորդներ 36 քննական կենտրոններում:

Թիվ 189 ավագ դպրոցում տեղակայված քննական կենտրոն այցելեց նաեւ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը եւ շրջեց քննասենյակներում, զրուցեց դիմորդների հետ՝ հաջողություն մաղթելով նրանց. «Հավաստացնում եմ, որ թեստերն ավելի դյուրին են, քան դուք պատկերացնում էիք նախապատրաստվելու փուլում: Մի շարք խնդրահարույց առաջադրանքներ շտեմարաններից հանվել են, եւ եթե այդ ամենից հետո թեստերում լինեն երկիմաստ առաջադրանքներ կամ այսպես կոչված քննական ծուղակներ, հավաստացած եղեք, որ այդ հարցը լուծում է ստանալու հոգուս ձեզ»:

*Տես էջ 8*

# Հատուկ խնամքի տակ գտնվող հիվանդների դեղորայքը վաճառվել է ինքնարժեքից եռակի թանկ

## *Գերիշխող դիրքի չարաշահման համար «Կուրացիոն» տուգանվել է 10 մլն դրամով*

Գերիշխող դիրքի չարաշահման համար տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը երեկ 10 մլն դրամով տուգանեց դեղորայքի ներկրմամբ եւ իրացմամբ զբաղվող «Կուրացիո» ընկերությանը: Հանձնաժողով էր դիմել դեղորայքի ներկրմամբ զբաղվող «Բեյբի Սիմ» ընկերությունը, տեղեկացնելով, որ մրցակից «Կուրացիոն» խոչընդոտում է իր գործունեությանը՝ թույլ չտալով մասնակցել Երեւանի պետական բժշկական համալսարանի կողմից կազմակերպվող էնտերալ զոնդային սննդի ձեռքբերման մրցույթներին: «Բեյբի Սիմ» ընկերությունը առաջարկել է բարձր կալորիականությամբ էնտերալ զոնդային սնունդ շատ ավելի էժան գնով, քան տրամադրում է «Կուրացիոն»: Սակայն բժշկական համալսարանը գնումները կազմակերպել է այնպես, որ «Բեյբի Սիմը» հնարավորություն չի ունեցել մասնակցելու դրանց:




Մասնավորապես, զոնդային սննդի մասով մրցույթը կազմակերպվել է «Բուժ. սարքավորումներ» ապրանքի ներքո, այն դեպքում, երբ բուժսարքավորում չէ: «Բեյբի Սիմը» մասնակցելու հրավեր չի ստացել, քանի որ գրանցված է եղել «Դեղորայք» եւ «Սննդամթերք» առաջարկող մասնակիցների ցանկում:

*Տես էջ 8*

# Իրողություններից «անտեղյակ» ԱՄՆ պետքարտուղարը եւ «պայծառ ապագա» գնացող ադրբեջանցի նախարարը

Ադրբեջանը, պարզվում է, ըստ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի, «տարբեր կրոնների, տարբեր կրոնական խմբավորումների միասին ապրելու կարողության դրսեւորման հրաշալի վիճակ է»: Այսպիսի հայտարարություն, որ ավելի շուտ կենաց է հիշեցնում, արել է ԱՄՆ պետքարտուղարը Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովի հետ հանդիպումից առաջ` հունիսի 3-ին:

Պետքարտուղարության կայքէջի համաձայն, Քերրին նախ հիշեցրել է, որ վերջին ամիսներին քանիցս զրուցել է Ադրբեջանի նախագահ Ալիեւի հետ, տեղեկացնելով նաեւ, թե մինչեւ իրենց զրույցը Մամեդյարովը հանդիպել է Ամերիկյան հրեական հանձնաժողովին եւ «կանգնած ծափողջույնների արժանացել, երբ խոսել է հակասեմականության դեմ պայքարելու ու բազմազանության եւ բազմակարծության պատրաստակամության մասին»:

Որ Մամեդյարովը կարող է իր ու Ադրբեջանի գլուխը գովել, հասկանալի է, սակայն այնքան էլ հասկանալի չէ, անգամ դիվանագիտական բարեհաճության ու ներբանկատության պարագայում ԱՄՆ պետքարտուղարը կարող է ամենայն հանգստությամբ ներկայացնել Ադրբեջանի ԱԳ նախարարի խոսքերը բազմա... պատրաստակամության մասին, երբ մարդու իրավունքներին առնչվող գրեթե բոլոր զեկույցները հակառակն են պնդում:

«Ադրբեջանը կարեւոր գործընկեր է Աֆղանստանում... հավասարապես կարեւոր է հյուսիսային տեղաբաշխման ուղու, նաեւ հարավային գազամուղի եւ այլ հարցերի առումով, որ մեծագույն կարեւորություն ունեն մեզ համար», ասել է Քերրին:

Այդուհետեւ պետքարտուղարը կտրուկ անդրադարձ է կատարել ղարաբաղյան խնդրին: «Խոսել ենք նաեւ Լեռնային Ղարաբաղի մասին: Դա սառեցված հակամարտություն է, ինչպես մենք կոչում ենք, մի հակամարտություն, որ սպառնում է տարածաշրջանում կայունությանը, եւ ինչով մենք պետք է զբաղվենք», հասկանալի չէ` ինչ համատեքստում նշել է Ջոն Քերրին մի տեսակ դիլետանտ ներկայանալով: Նրա խոսքերով. «Որպես Մինսկի խմբի համանախագահ ԱՄՆ-ը լուրջ հետաքրքրություն ունի օգնելու Ադրբեջանին եւ Հայաստանին` ի վիճակի լինելու գտնել առաջ տանող ուղին»:

«Ես կարծում եմ, որ առաջ գնալու ուղի կա, եւ մենք կշարունակենք աշխատել հանդարտորեն ու համբերատար խրախուսելով կողմերին կամ վստահության միջոցներ հիմնել եւ կարգավորման ուղի գտնել», Մամեդյարովին ջերմ ողջունող Քերրին այսպես է ձեւակերպել Միացյալ Նահանգների ներգրավվածությունը, հետաքրքրական շեշտադրում անելով. «Երկուսն էլ նախկինում մոտ էին, սակայն վերջին պահին ինչ-որ բաներ տեղի ունեցան, ինչը բոլորին զրկեց այդ հնարավորությունից»:

Վերջին արտահայտությունն, իհարկե, մեկ հասցեատեր ունի, որ այս ողջ խոսակցության ընթացքում կանգնած է եղել ԱՄՆ պետքարտուղարի կողքին, սակայն Քերրիի խոսքը մնացել է ընդհանուր ձեւակերպմամբ:

Այսքան, փաստացի, անտեղի ասվածին Մամեդյարովն էլ իր բաժինն է ավելացրել, թե Ադրբեջանը հարեւան Հայաստանի հետ «հաստատապես ուզում է ապրել խաղաղ` արժանապատվությամբ... դեպի պայծառ ապագան կնայենք ու կապրենք կողք կողքի որպես լավ հարեւաններ»:

Ռազմատենչ հռետորաբանությամբ արդեն բոլորին հոգնեցրած Ադրբեջանի թիվ մեկ դիվանագետը բնավ չի ամաչում ստել ի լուր աշխարհի, հետն էլ խոսել պայծառ ապագայից այն պարագայում, երբ Ադրբեջանում հայատյացությունն ու հակահայկականությունը պետական քաղաքականության ողջ էությունն են:

Ինչեւէ, երեկ նույն պետքարտուղարի հետ հանդիպել է նաեւ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, որի մասին դեռ կտեղեկացնենք: Նշենք միայն, որ Վաշինգտոնում նախատեսված էին նաեւ Նալբանդյանի հանդիպումները ԱՄՆ Կոնգրեսում, հանդիպումներ ամերիկահայ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ եւ ելույթը Ռազմավարական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«ՊԱՏՆԵՇԻ ՎՐԱ»

# Անհատն ու հասարակությունը

**Ամենահիմնականը թվում է այլեւս անցյալում է. դա մեր երազն էր` օրինական երկիր ու հասարակություն ունենալու: Մենք հայտնվել ենք ազատության փորձության բարոյական փակուղում` ինքներս մեզ մի սահմանի հասցրած, որտեղից դուրս գալը դարձյալ փյունիկյան թռչունի առասպելական ճիգերի է հավասար: Ի՞նչն ենք ուզում պահպանել` մեր ընդերքն ու տնտեսությո՞ւնը, մարդկային ռեսու՞րսը, երկուսն էլ արտահոսում-արտագաղթում են` մեկ է` Հյուսիս, թե` Արեւմուտք: Գլխապտույտ էր` հոսանքների, գայթակղությունների: Մենք մանուկ չէինք, ոչ էլ այնքան ծեր` չկողմնորոշվելու համար: Այնքան հատկանիշ (սխալ ու արատ) ու պատճառ կա այս ամենը բացատրելու: Բայց ինքներս մեր ներսը նախ նայենք (ապրվող մեր կյանքն ու մեր արած քայլերը), հետո բողոքենք կամ նվաստացնենք ուրիշին: Մեր պարտությունը` ի գին այլոց հաղթանակը կամ հաջողությունը նշավակելուն, ոչնչով չի փոխվելու:**

**Բայց, ինչ էլ որ լինի, սպասումը կա, ամենաաստառված վիճակում անգամ:**

**Մասսաները, այն էլ` մտավոր ծուլության հասած, ոչինչ չեն որոնում, նրանք լավագույն դեպքում կամ հետեւորդ են, կամ` կամակատար, նրանց երբեմն-երբեմն պոռթկումները դարձյալ ուղղորդված են, եթե չեն գնված, ուրեմն անհատի, առաջնորդի գոյությունն անխուսափելի է: Հիմա անհատների ժամանակը չէ,- կարելի է այսպես մտածել: Քաոսային այս խառնարանում արժեքներն այլեւս ոչ թե շրջվել, այլ իմաստազրկվել են, անհամացել, որտեղ յուրաքանչյուրն է փորձում ցուցահանել անհատականության իր որակները` ինչպիսին էլ, որ լինի: Մանավանդ որ ինքնարտահայտման լավագույն հնարավորությունը սեփական կարծիքը, փորձը, վերաբերմունքը` ազատորեն բացահայտելու եւ այլոց հետ կիսելու, կա: Ահավասիկ` Youtube-ը եւ Facebook-ը, վերջինն ասես այսօրվա խառնարանի սիմվոլը, նշանը լինի: Լրահոսի խիտ բազմազանության, մարդկային նախասիրությունների ու պատկերների խայտաբղետ ֆոնին երբեմն հայտնվում է տարաշխարհիկ մտածողության մի անհատ` իրենով մի պահ քանդում պղտոր հեղեղն ու անցնում: Անցնում, որովհետեւ մենակ է:**

Տես էջ 4

# «Տաշիր»-ի նվերը բանակին



**«Տաշիր» բարեգործական հիմնադրամը ՀՀ զինված ուժերին շուրջ 200.000 դոլար արժողությամբ 10 նոր մեքենա է նվիրաբերել: Տրամադրված մեքենաների մակնիշներն ընտրվել են համաձայն ՀՀ ՊՆ ներկայացրած պահանջարկի, իսկ բաշխումը զորամասերին կիրականացնի նախարարությունը:**

**«Յուրաքանչյուր երկրի բանակ առավել հզոր է իր հասարակության աջակցությամբ ու սիրով: Եվ յուրաքանչյուրի պարտքն է նեցուկ լինել մեր անվտանգության երաշխավորին` թե՛ բարոյապես, թե՛ հնարավորության սահմաններում տրամադրել նաեւ նյութական օժանդակություն», ասաց ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավար Արտակ Ճաղարյանը` հավելելով, որ հիմնադրամը, ի թիվս այլ ոլորտների, առանձնահատուկ ուշադրություն է դարձնում նաեւ հայոց բանակին` տարիներ շարունակ տրամադրելով աջակցություն: 2011-ին էլ է հիմնադրամը մեքենաներ տրամադրել զինված ուժերին:**

Հ. Հ.

# «Անօդաչու թռչող սարքեր» մրցույթի եզրափակիչ փուլը



Ամփոփվել են Հայաստանում առաջին անգամ անցկացված «Անօդաչու թռչող սարքեր» մրցույթի եզրափակիչ փուլի արդյունքները: Հունիսի 2-ին Արզնիի ուսումնական օդանավակայանում կայացած մրցույթին մասնակցել է հինգ թիմ` «Sky Spy»-ը, «Eagle Eye»-ը, «Dangerous Sky»-ը, «Fly Art»-ը եւ «Armdroid»-ը: Թիմերը նախագծել ու պատրաստել էին այնպիսի թռչող սարքեր, որոնք թռիչքի ընթացքում ուսումնասիրում էին տարածքը, հասկանում տեղորոշման համար նախատեսված նշանները, առցանց ուղարկում էին պատկերները, գտնում հատուկ նշանատեղը, նետում մինչեւ 300 գրամ բեռ եւ վերադառնում էին մեկնարկային կետ: Ամենաբարձր միավորները հավաքել եւ մրցույթում առաջին տեղը զբաղեցրեց «Eagle Eye» թիմը` ստանալով 500 000 ՀՀ դրամի չափով մրցանակ: Երկրորդ տեղում է «Dangerous Sky» թիմը, որն էլ արժանացել է 400 000 դրամ մրցանակի: Երրորդ տեղ զբաղեցրել է «Armdroid»-ը` 300 000 դրամական մրցանակով: Մյուս երկու թիմերը` «Fly Art»-ը եւ «Sky Spy»-ը, արժանացել են խրախուսական մրցանակների եւ ստացել 150 000-ական դրամական պարգեւ:

Անօդաչու թռչող սարքերը լայն կիրառություն ունեն թե՛ տնտեսության մեջ, թե՛ ռազմական ոլորտում: Դրանք կարող են հսկել երթեւեկությունը, նկարահանել անտառները` կանխելով որսագողությունն ու հրդեհները, արտակարգ իրավիճակների ժամանակ կարող են տեսագրել տարածքը եւ հաղորդել անհրաժեշտ տվյալներ, ինչպես նաեւ բեռներ տեղափոխել անանցանելի վայրեր: Իսկ ռազմական ոլորտում այդ սարքերը կարող են կիրառվել հետախուզություն եւ թիրախների խոցում իրականացնելիս:

Անօդաչու թռչող սարքերի հաջորդ մրցույթը նախատեսվում է կազմակերպել 2014 թվականի մայիսին: «ԱրմՌոբոտիքս»-ի կազմակերպիչն է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը, գլխավոր հովանավորն է նորարարական նախագծերի աջակից ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը, տեխնիկական հովանավորը` «Արթին Վարուժան» ընկերությունը: Նախագծի իրականացմանն աջակցել են ՀՀ պաշտպանության նախարարությունն ու Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը:



# Շրջանցել Երեւանի Հերացու եւ Մյասնիկյան փողոցները

Ինչպես տեղեկացանք ճանապարհային ոստիկանությունից, Երեւան քաղաքում իրականացվող ծավալուն ասֆալտապատման աշխատանքների հետ կապված` հունիսի 4-ին, 5-ին եւ 6-ին խորհուրդ է տրվում շրջանցել Հերացու եւ Մյասնիկյան փողոցները հետեւյալ ուղղություններով.

- դեպի Ազատության պողոտա,
- դեպի Կոմիտաս, Դավիթ Անհաղթ եւ Ռուբինյանց փողոցներ,
- դեպի Դավիթ Բեկ փողոց:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Լուրը հեղինակային իրավունքի սուբյեկտ չէ, բայց ո՞ր լուրը

Մի շարք թերթերի խմբագիրներ պայքար են սկսել իրենց էջերից անարգել ինտերնետ հոսող լրատվության դեմ, երբ չի նշվում աղբյուր, որեւէ հղում չի կատարվում՝ այդպիսով թերթի ժամանակատար ջանքերը հավասարեցնելով զրոյի եւ ինտերնետային լրատվամիջոցների վարկանիշն ու հաճախելիությունը բարձրացնելով թերթերի էքսկլյուզիվ նյութերի հաշվին: Մինչդեռ նման գրագողությունը նախ խփում է թերթերի վաճառքին՝ կրճատելով թերթի վաճառքը, եւ հետո վիրավորական է, երբ դու աշխատում ես, ուրիշն է ուտում:

Իհարկե, երեւույթը նոր չէ, գրագողությունը մշտական պրոբլեմ է եղել, սակայն այն համացանցի լայն տարածմամբ այսօր ահռելի չափերի է հասել եւ կասկածի տակ է դնում թերթերի գոյությունն առհասարակ: Ասենք, որ ինտերնետային լրատվամիջոցները վերցնում են միմյանցից, պատահում է, որ թերթերն էլ՝ նրանցից, եւ այս շրջահոսը կարծես անվերջ է: Մի բան պարզ է, որ ինտերնետի մեր այս դարում պրոցեսը կանգնեցնել չի լինի, ինտերնետը խուժել է մեր կյանք եւ ամեն օր ավելի ու ավելի շատ կենսական տարածքներ է գրավում, դրա դեմ ոչինչ անել հնարավոր չէ, եւ պետք էլ չէ, հիմա համացանցը մեր կյանքի բոլոր ոլորտներում է: Իսկ հիմնավորումների եւ դիտարկումների առումով առավել հեղինակավոր համարվող թերթերը, կամաց-կամաց, ուզեն թե չուզեն, թղթային տարբերակի հույսին չեն կարող մնալ, քանի որ ինտերնետն ավելի ընթերցելի է: Սակայն դա չի նշանակում, որ այդպես անխղճորեն կարելի է կողոպտել թերթերին՝ նրանց դժվար ծնված, մեկ ողջ օրվա եւ երբեմն ավելի տեւական աշխատանքի արդյունք նյութերը մի վայրկյանում սեփական ընթերցողին մատուցելով մամուլի տեսություն անվան տակ: Որեւէ հեղինակի համար դա գուցե եւ հաճելի է, քանի որ ընթերցողական ավելի լայն լսարանի է արժանանում, բայց թերթը պահող խմբագրի համար դա ուղղակի կործանարար է: Ահա եւ աշխատել է մի խումբ խմբագիրների ինքնապաշտպանական բնազդը, որոնք բարձրացրել են «Հեղինակային եւ հարակից իրավունքների մասին օրենքում» փոփոխություն անելու խնդիրը՝ թերթերից վերցված նյութերի հղումներ եւ խիստ մասնակի մեջբերումներ ապահովելու համար, որ թույլ կտա հետաքրքրված ընթերցողին թերթ գնել եւ այնտեղ փնտրել հետաքրքրող հարցի պատասխանը: Խմբագիրների նախաձեռնությունն, իրոք, արդյունք տվեց՝ հղումներ այսօր կան, բայց նյութերի բուն ասելիքը շարունակվում է հրամցվել կայքերով, այնպես որ ընթերցողն իրեն հազիվ թե նեղություն տա թերթ գնելու: Թերթերին մնում է ակամա գովազդը, որ կայքերն իրենց մեջբերումներով ապահովում են թերթերի համար:




Ազգային ժողովի մի խումբ պատգամավորներ ականջալուր են եղել թերթերի խմբագիրների պահանջին եւ նախաձեռնել փոփոխություններ վերը նշված օրենքում: Սակայն մի խնդիր կա, որի վերաբերյալ օրենսդիրներն ու խմբագիրները տարբեր պատկերացումներ ունեն: Գործող օրենքում օրվա ընթացիկ իրադարձությունների եւ փաստերի մասին տեղեկատվությունը հեղինակային իրավունքի օբյեկտ չէ, մինչդեռ խմբագիրներ ասում են՝ ինչո՞ւ պետք է մի քանի տողանոց երգը հեղինակային իրավունքի սուբյեկտ լինել, իսկ, ասենք, կեսէջանոց լուրը՝ ոչ: Օրինակ՝ լրագրության փորձագետ **Մեսրոպ Հարությունյանը** կարծում է, որ հենց այս կետը դրոշակ դարձնելով են կայքերը թխում տեղեկատվությունը՝ սկսելով լուրից եւ անցնելով ավելի լուրջ բաներ գրագողանալուն:

Ազգային ժողովի պետաիրավական հանձնաժողովի անդամ, օրենքի նախագծի համահեղինակներից **Արփինե Հովհաննիսյանը** «**Ազգի**» հետ զրույցում նշեց, որ օրվա ընթացիկ լրահոսը որեւէ պարագայում չի կարող հեղինակային իրավունքի օբյեկտ լինել եւ պաշտպանվել: Դա նախատեսված է ինչպես Գեղարվեստական եւ գրական ստեղծագործությունների մասին Բեռնի կոնվենցիայով, այնպես էլ մեր՝ «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» օրենքով եւ ենթակա չէ փոփոխության, որովհետեւ դա միջազգային պարտավորություններով է սահմանված: Իսկ «օրվա ընթացիկ լրահոս», ըստ Ա. Հովհաննիսյանի, նշանակում է պաշտոնական հաղորդագրություններից վերցված եւ ընթացիկ իրադարձությունների մասին տեղեկատվությունը, տեղեկատվական բլոկը կարելի է օգտագործել ինչպես առանձին, այնպես էլ հրապարակման մեջ:

Սակայն այստեղ խոսքը հասկացության թերի լինելու մասին է: Եթե տեղի են ունեցել իրադարձություններ, որոնց մասին տեղյակ է միայն տվյալ լրատվամիջոցը, այս պարագայում դա չի կարող հեղինակային իրավունքի օբյեկտ չլինել, խնդիրը սա է: Կայքերը վերցնում են ոչ թե լրահոս, այլ տվյալ լրատվամիջոցի էքսկլյուզիվ լուրը, այնպես որ օրենքի նոր փոփոխությամբ գուցե այս տարբերակի համար դրույթ պետք է մտածել (խոսքն ամեն օր հորինվող ապատեղեկատվության մասին չէ, իհարկե՝ սեփական հավաստի աղբյուրների վկայակոչմամբ): Իսկ ընդհանրապես՝ օրենսդրական նախաձեռնությունը, որին միացել են պատգամավորներ բոլոր խմբակցություններից, առայժմ քննարկման փուլում է եւ դեռ պետք է ստանա կառավարության հավանությունը, իսկ նրա բուն բովանդակությունը վերաբերում է նրան, որ հեղինակային նյութը այլ լրատվամիջոցի կողմից հրապարակվելիս թույլատրվելու է օգտագործել համապատասխան չափով, մանավանդ համաշխարհային պրակտիկայում (Եվրոպական դատարանի պրակտիկայում) ընդունված չափանիշներ կան, որոնց հիմքում ընկած է հեղինակային ստեղծագործության արդարացի օգտագործման դոկտրինը: Այն թույլատրում է տվյալ նյութն օգտագործել բացառապես համապատասխան ծավալով եւ բացառապես հղումով: Իսկ հեղինակային իրավունքի այս տեսակ խախտումները վիճարկվելու են դատական կարգով եւ համապատասխան տուգանքներ են նախատեսվելու:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Գյումրին եւ լեհական Բելոստոկը՝ քույր քաղաքներ

Գյումրին եւ Լեհաստանի Բելոստոկ քաղաքն այսուհետեւ կլինեն քույր քաղաքներ: Շիրակի մարզկենտրոնի ղեկավար Սամվել Բալասանյանը եւ երկօրյա այցով Գյումրիում գտնվող լեհական Բելոստոկ քաղաքի քաղաքապետ Տադեուշ Տրուսկոլասկին անցած շաբաթ օրը ստորագրել են համագործակցության նախնական հուշագիր, որով նախատեսվում է երկու քաղաքների համագործակցություն հատկապես մշակույթի եւ սպորտի բնագավառներում:

Բելոստոկը մեծությամբ ու նշանակությամբ Լեհաստանի 11-րդ քաղաքն է, ունի 300 հազար բնակիչ եւ հարուստ մշակութային ժառանգություն: Լեհական քաղաքի պատվիրակությանն ընդունել, այնուհետեւ հուշագրի ստորագրմանը ներկա է եղել Շիրակի մարզպետ Ֆելիքս Ցոլակյանը: Գումրու քաղաքապետը լեհ գործընկերոջն ու նրա ղեկավարած պատվիրակության անդամներին հրավիրել է «Գյումրին՝ ԱՊՀ 2013 թ. մշակութային մայրաքաղաք» ծրագրի հունիսի վերջին կայանալիք մեկնարկի հանդիսավոր միջոցառումներին, իսկ լեհ քաղաքապետն իր հերթին Սամվել Բալասանյանին հրավիրել է մասնակցելու սեպտեմբերին Բելոստոկում, Արեւելյան գործընկերության ծրագրով կայանալիք համաժողովին:

Երկու քաղաքների համագործակցության հուշագիրը ստորագրվել է Գյումրու քաղաքապետարանի շենքի աջ թեւի երրորդ հարկի նույն օրը հանդիսավոր բացված սրահում, որտեղ այսուհետեւ նախատեսվում է անցկացնել համայնքային ավագանու նիստերը: Դրանք մինչեւ այժմ անցկացվում էին քաղաքապետի աշխատասենյակում: Նորակառույց շենքի այս հատվածը մինչեւ այժմ չէր գործում՝ հարդարման աշխատանքների ավարտված չլինելու պատճառով: Այստեղ կտեղավորվեն նաեւ համայնքապետարանի որոշ բաժինների աշխատասենյակները:

Գ. Մ.

«ՆՈՒԲԱՐԱՇԵՆ» ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

# Սյունիքի մարզպետի որդին եւ թիկնապահը կալանավորվել են

Գնդապետ, ԼՂՀ զորամասերից մեկի հրամանատար Արտակ Բուդաղյանի վիճակը շարունակում է մնալ ծանր: Զինվորական հոսպիտալի բժիշկները նրա առողջական վիճակում գրեթե փոփոխություն չեն նկատում եւ չեն բացառում երրորդ վիրահատական միջամտության հավանականությունը:

Միեւնույն ժամանակ՝ ՀՀ ՊՆ քննչական ծառայության ՀԿԳ քննչական բաժնում ձեւավորված քննչական խմբի ղեկավարը Զարզանդ Նիկողոսյանին եւ Տիգրան Խաչատրյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ ՔՕ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի՝ սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, 235 հոդվածի 1-ին՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը, եւ 112 հոդվածի 1-ին մասերով՝ դիտավորությամբ առողջության ծանր վնաս պատճառելու հատկանիշներով: ՊՆ քննչական ծառայության հասարակայնության հետ կապերի վարչությունից «**Ազգ**»-ին տեղեկացրին, որ ներկայացվել են միջնորդություններ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան Նիկողոսյանի եւ Խաչատրյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին: Դատարանը բավարարել է ներկայացված միջնորդությունը:

Սյունիքի մարզպետի որդու եւ թիկնապահի համար պաշտպանները ներկայացրել են գրավի միջնորդություն, սակայն դատարանը մերժել է: Տիգրան Խաչատրյանի եւ Զարզանդ Նիկողոսյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է երկամսյա կալանք, ու նրանց տեղափոխել են Երեւանի «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ:

«**Ազգ**»-ը նախորդ համարում արդեն տեղեկացրել է, որ հունիսի 1-ին Գորիսում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի տան մոտ տեղի է ունեցել վիճաբանություն, ինչն ավարտվել է կրակոցներով: Գորիսի նախկին քաղաքապետ Ավետիք Բուդաղյանը մահացել է, իսկ նրա եղբայրը՝ ՊՆ գնդապետ Արտակ Բուդաղյանը հրազենային ծանր վնասվածքներով տեղափոխվել է զինվորական հոսպիտալ: Կրակոցների ժամանակ վիրավորվել է նաեւ Սուրեն Խաչատրյանի թիկնապահ Նիկոլայ Աբրահամյանը, որը բուժումը ստանում է «Էրեբունի» բժշկական կենտրոնում:

Հ. Հ.

# Ազատվել հաբռզածներից»

*1-ին էջից*

Դեռ չեն մարել Գյումրիի կրակոցների արձագանքները, դեռ զգալ են տալիս դրանց հետեւանքները, որոնք հիշեցնում Գյումրիի նախկին աղմկոտ քաղաքապետի մասին, դեռ չի մոռացվել Վահե Ավետյանի դեպքի ցավը, դրանք երկուսն էլ մեր երես առած օլիգարխների շրջապատի հետ կապ ունեին: Չի մարել Պռոշյանի գյուղապետի սպանության հարուցած անապահովության զգացումը: Այդ բոլորը չմոռացած հասարակությանն այս անգամ էլ մի այլ արյունոտ միջադեպ ցնցեց, եւ մահվան ելքով սկանդալի հետ հերթական անգամ կապ ունի մեկ այլ մականունավոր՝ Լիցկան կամ Սյունիքի տխրահռչակ մարզպետ (ժամանակավորապես սառեցված լիազորություններով) Սուրիկ Խաչատրյանը:

Այս երկու-երեք օրը, երբ Սյունիքի մարզպետի տան մոտ տեղի ունեցավ մահվան ելքով «ռազբորկա»՝ վիճաբանության եւ կրակոցների հետեւանքով մեկ մահ եւ վիրավորներ կան, գործող լրագրողները մեկ-մեկ հիշում են բոլոր այն սկանդալները, որոնք կապվում են Սյունիքի մականունավոր մարզպետի հետ, ու բոլոր եզրահանգումներում մի միտք է թեւածում. եթե Սյունիքի մարզի բնակիչները եւ մենք, լրագրողներս, հանդուրժողական կեցվածք չորդեգրեինք Սյունիքի մարզպետի եւ նրա շրջապատի անհանդուրժելի վարքի նկատմամբ, ապա այս վերջին հանցագործությունը տեղի չէր ունենա: Նաեւ մեր մեղքն է: Սոցիալական ցանցերը դժժում են տեղի ունեցածի քննարկմամբ, հնչում են մեղադրանքներ իշխանության եւ իշխող կուսակցության հասցեին, որի անդամ ու այն էլ ղեկավար կազմի անդամ է Սուրիկ Խաչատրյանը: Պահանջվում է մարզպետի վերջնական հրաժարականը: Մի մասը հավատում է, որ հանցագործներն արժանի պատիժ կստանան, մի մասը թերահավատ է՝ անցյալի նախադեպերն աչքի առաջ ունենալով, ու անգամ, ինչն ամենասարսափելին է, վենդետայի կոչեր են հնչում: Լիցկայի կուսակիցների թույլ հակադարձումները եւ նախաքննությանը հղումները ցույց են տալիս, որ Լիցկային այս անգամ էլ են ուզում անվնաս դուրս բերել, անկախ նրանից, որ նրա որդին ձերբակալված է: Ու մնում ես զարմացած. լավ, ի՞նչ ծառայություն պետք է մատուցած լինի Ս. Խաչատրյանը, որ նրանից ազատվելը իշխանության թիվ մեկ խնդիրը չլինի այն դեպքում, երբ նրա անվան հետ կապված հերթական սկանդալն առաջին հերթին իշխանությանն է կպչում:

Ինչ ծառայություն էլ Սուրիկ Խաչատրյանը մատուցած լինի երկրի պաշտպանության ժամանակ, ինչ ծառայություն էլ մատուցած լինի սեփական կուսակցությանը, նրա շուրջն առաջացած աղմուկը մշտապես խփել է հենց այդ կուսակցությանն ու նրա լիդերին: Սոցիալական ցանցերում սկսված բողոքի շարժումն ընդդեմ մականունավոր մարզպետի եւ արյունոտ միջադեպը հրահրող նրա շրջապատի, նախագահ Սարգսյանին ուղղված պահանջը՝ նրան անմիջապես պաշտոնից ազատելու, մեզ հուշում են, որ ամեն ինչ փոխվել է մեր շուրջը, հասարակությունն այլեւս առաջվանը չէ, եւ «հաբռզածներից» չազատվելն այժմ չի ներվելու, «հաբռզածներից» չազատվելն այժմ խփում է իշխանությանը, նրա առաջին դեմքին, այն էլ՝ ոնց է խփում. ով էլ լինի «հաբռզածը»՝ նրանից պետք է ազատվել, անպատժելիության այս մթնոլորտը պետք է փոխվի, անպատժելիներ չպետք է լինեն: Գաղջ մթնոլորտը պետք է փոխվի, ասել եք, իշխանությունը պետք է մաքրել իրենց անպատժելի պատկերացնողներից: Այս նոր միջադեպը վկայությունն է հենց Հայաստանի նախագահի մասնանշած գաղջ մթնոլորտի: Իսկ հանցագործության բացահայտումը պետք է լինի հնարավորինս բաց, ու այս անգամ գոնե ոչինչ չպետք է կոծկվի կամ ուրիշների վրա բարդվի:

# Լինե՞լ, թե՞ չլինելու հրատապ խնդիրը

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Իրենց բնօրրանից արտագաղթելու հայերի հակվածությունը գերազանց հանգավորումով է բնութագրում ՀՅԴ քաղաքական վերլուծաբան Է. Ագնունին գրելով. «Հայն ամեն տեղ է փնտրում ապաստան, բացի այն տեղից, որը կոչվում է Հայաստան»:

Հակվածությունն ունի քաղաքական, զինվորական եւ տնտեսական արմատներ, բայց դարեր շարունակ հայերը կարծես ավելի հեշտությամբ են որոշում կայացրել արտագաղթի հոսանքին միանալ, քան լրջորեն պայքարել դրա դեմ: Մեր գրականությունն ու երգերը հագեցած են կարոտի, կարոտախտի, հայրենի երկրի, քաղաքի եւ գյուղի հանդեպ մեր ունեցած անսահման սիրո արտահայտություններով: Հազվագյուտ են իրականացումների, ապաքինման ու վերականգնման հորդորները:

Արտաքին պատճառների կողքին ստորադասության զգացումն է հայերի ենթագիտակցության եւ հոգեբանության մեջ, որ մղել է նրանց ծառայելու օտարներին եւ իրենց տերերին ապացուցելու, թե ինչպիսի գերազանց կարողությունների տեր են իրենք: Օրինակները շատ են: Հայկական ծագումով կայսրեր, իշխաններ եւ զորավարներ եղել են Բյուզանդական կայսրությունում, նույնիսկ այն ժամանակ, երբ բյուզանդական զորքերը հարձակվում էին հայկական թագավորությունների եւ պատմական մայր կենտրոնների վրա, ինչպիսին Անին էր, մրցակիցը իր ժամանակակից մյուս կենտրոնների՝ Դամասկոսի, Բաղդադի եւ Ստամբուլի: 9-րդ դարում հայ զինվորականությունը օժանդակել է Եգիպտոսը եւ հատկապես Ալեքսանդրիան նվաճող մահմեդական զորքերին: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմը երեւան հանեց հայ զինվորականության հանճարներին, միշտ, անշուշտ, խորհրդային դրոշի ներքո: Մարշալ Հովհաննես Բաղրամյանի, ծովակալ Իսակովի, գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի եւ Խ. Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հերոսություններով են նաեւ գրվել այդ պատերազմի փառավոր էջերը: Եվ չմոռանանք խորհրդային ժամանակաշրջանի պետական գործիչ Անաստաս Միկոյանին՝ ԽՍՀՄ քաղբյուրոյի անդամին, Գերագույն խորհրդի նախագահության նախագահին:

Մի այլ ճակատում Միսաք Մանուշյանն ու իր թիմը գլխավորում էին Ֆրանսիայի ազատագրման դիմադրության շարժումը: Եվ վերջապես հիշենք հինգ հազար զինվորներով հայկական լեգեոնին, որը 1918-ի սեպտեմբերի 19-ին Արարայի (Պաղեստին) ճակատամարտում, դաշնակիցների հրամանատարության ներքո ճեղքեց գերմանա-օսմանյան ամրաշինությունները: Պոլ Իգնատիոսը Մ. Նահանգներում նավատորմի աչքի ընկնող քարտուղարներից (նախարարներից) մեկն էր:

Կարելի է շարունակել օրինակների այս թվարկումը, բայց այս պատմական տվյալների թվարկումն անգամ բավական է ապացուցելու վերոնշյալ տեսությունը, որ ընկերացել է մեր ճակատագրին պատմության ողջ ընթացքում: Մենք լավ ենք ծառայում օտարներին, բայց խուսափում ենք ինքներս մեզ ծառայելուց եւ խոչընդոտում ենք մեր առաջընթացին: Եթե դրան ավելացնենք նաեւ դավաճանության թեկուզ մեկ փաստ, պատկերն ավելի պարզ կդառնա: Այսպես, 1918 թվի փետրվարին, երբ պարտված օսմանյան բանակը փախուստի էր դիմել եւ ապաստան էր ման գալիս, իսկ նահանջող ռուսական բանակն էլ հսկայական քանակի ուտելիք եւ զինամթերք էր թողել իր հետեւում, արեւելահայ կամավորները, որոնք միացել էին ռուսական բանակին, մերժեցին Կարսի ամրոցը պաշտպանելու համար կռիվ մղել զորավար Անդրանիկի հրամանատարության ներքո: Եթե նրանք միանային եւ պաշտպանեին մեր ազգային հերոսին, շատ հավանական է, որ առնվազն Կարսն ու Անին Հայաստանի ներկա սահմանների մաս կազմած կլինեին:

Միեւնույն տրամաբանությունը իշխում է նաեւ այսօր: Հայաստանի ամեն մի քաղաքացի համոզված է, որ ինքն ավելի լավ նախագահ կլիներ, քան ներկայիս գործող նախագահը: Ինչպես ասում են՝ ղեկավարները շատ են, ծառայողը՝ գործ անողն է պակասում:

Հայերի ցիրուցան լինելը խոր արմատներ ունի, որն հասնում է մինչեւ միջին դարեր, երբ Անիի ծաղկուն մայրաքաղաքը ավերվեց եւ նրա բնակչությունը փախավ հեռավոր վայրեր:

Անիի վրա առաջինը հարձակվեցին մեր քրիստոնյա հարեւանները՝ բյուզանդացիները 1044-ին: Այնուհետեւ սելջուկները՝ 1064-ին: Իսկ 1579-ին քաղաքն անցավ օսմանյան տիրապետության տակ: Մի ժամանակ 100-200 հազար բնակչություն ունեցող քաղաքը հետզհետե դատարկվեց, ամայացավ եւ ավերակների վերածվեց 18-րդ-19-րդ դարերում: Բնակչությունը գաղթեց Ուկրաինա, Լեհաստան, Հունգարիա եւ Ռումինիա: Աստիճանաբար նրանք ձուլվեցին տեղացի ժողովուրդներին եւ անհետացան: Գաղթելու ավելի վաղ շրջանի միտումը, որ հայերին հասցրեց մինչեւ Կենտրոնական եւ Հարավային Փոքր Ասիա, նպաստեց կիլիկյան իշխանապետությունների ձեւավորմանը, որոնք այնուհետեւ վերաճեցին Կիլիկյան թագավորության (11-14-րդ դարեր): 1375-ին Կիլիկիան ընկավ մամլուքների ձեռքը եւ Լեւոն VI Լուսինյան թագավորը գերեվարվեց Եգիպտոս:

Գաղթը հայոց պատմության մեջ այնքան մեծ տեղ է զբաղեցնում, որ գիտական լուրջ աշխատություններ են նվիրված այդ թեմային: Խորհրդային Միությունում Աշոտ Աբրահամյանը, իսկ սփյուռքում Արշակ Ալպոյաճյանը այն հեղինակավոր պատմաբաններն են, որոնք խորապես ուսումնասիրել են հայերի գաղթի պատմությունը:

Երբ քննարկում ենք գաղթի պատճառները, տեսնում ենք, որ հիմնականում արտաքին ուժերն են եղել գլխավոր պատճառը: Չնայած տարբեր մեկնաբանություններին եւ այն փաստին, որ պատմությունը հնարավոր չէ փոխել, կարող ենք այնուամենայնիվ որոշ դասեր քաղել անցյալից, որպեսզի ավելի հստակ պատկերացնենք մեր ապագան: 19-րդ դարի վիպասան Րաֆֆին, օրինակ, նշել է, որ սկիհներ եւ այլ կրոնական իրեր պատրաստելու նպատակով ներդրված գումարները եթե հայերն օգտագործեին զինամթերք արտադրելու համար, ապա մենք չէինք կորցնի մեր պետականությունը:

Պատմականորեն Հայոց լեռնաշխարհի բնակչության նվազեցումը Հայաստան արշաված օտար նվաճողների բախման հետեւանք է եղել: Հայ ժողովուրդը 1375-ից 1918-ը երազել է ունենալ ազատ, անկախ Հայաստան: 1918-ին ստեղծվեց առաջին հանրապետությունը: 1920-1991 թվերի խորհրդայնացումը Հայաստանին տվեց պետականության որոշակի երեւույթ, եւ չնայած Խորհրդային Միությունում առկա մարդու իրավունքների խախտումներին եւ բռնությունների դրսեւորումներին, հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, վայելեց կայունության, ապահովության եւ արվեստների, գիտության եւ գրականության ասպարեզներում աննախադեպ զարգացման պտուղները:

Հեգնական կարող է թվալ, սակայն «երկաթյա վարագույրը», արտագաղթը սահմանափակելու իր քաղաքականությամբ, ադյուհանդերձ նպաստեց բնակչության աճին: Անկախության հռչակումով լայնորեն բացվեցին արտագաղթի դարպասները, եւ այսօր ոչ ոք չի համարձակվում ճշգրիտ տվյալներ տրամադրել, թե քանի հոգի է արտասահման մեկնել Հայաստանից:

Այս անգամվա արտագաղթի համար մենք այլեւս չենք կարող մեղադրել օտարներին: Գուցե մասամբ՝ Թուրքիային միայն, քանի որ տնտեսությունը տուժում է շրջափակման հետեւանքով, եւ ժողովուրդը աղքատանում է: Բայց, զարմանալիորեն, այդ նույն շրջափակումը նպաստում է, որ հարուստներն է՛լ ավելի հարստանան:

Այսօր արտագաղթը Հայաստանի Հանրապետության համար առաջին մտահոգությունն է: Եթե, ինչպես ազերի նախագահն է հոխորտում, ազերիները ասպատակեն Հայաստանը, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրն էլ չի մնալու, որպեսզի այցելենք եւ գլուխ խոնարհենք մեր զոհերի հիշատակի առաջ:

Ճիշտ է, արտաքին գործոնները չենք կարող անտեսել, բայց բնագավառներ կան, որտեղ մենք՝ հայերս, ընդհանուր առմամբ, կարող ենք բարեփոխություններ մտցնել: Կառավարությունը, մասնավորապես, կարող է կտրուկ միջոցներ ձեռնարկել՝ կանգնեցնելու համար «արյունազեղումը»:

Հայաստանում նախագահը վերընտրվեց, նոր կառավարություն կազմավորվեց: Տեխնիկապես, դա միակուսակցական իշխանություն է, քանի որ ընդդիմությունը ջախջախվեց ընտրությունների ընթացքում: Իսկ եթե հաշվի առնենք իշխանության կառուցվածքը Հայաստանում, ապա պարզ կդառնա, որ միակուսակցական իշխանությունը նույնն է, ինչ միանձնյա իշխանությունը: Այնպես որ, նախագահ Սերժ Սարգսյանն ամեն հնարավորություններն ունի կանգնեցնելու այդ միտումը, նույնիսկ եթե նա դրա համար ստիպված լինի հանդես գալ որպես միապետ: Վիճակագրություններում նշված տնտեսական աճի ցուցանիշները դեռեւս իրենց դրական ազդեցությունները չեն թողնում սովորական ընտանիքների ապրելակերպի վրա:

Օլիգարխները լավագույնս են օգտվում երկու աշխարհների ընձեռած հնարավորություններից: Նրանք իրենց գործարարությունն են առաջ տանում Հայաստանում ինչքան ժամանակ որ կարողանում են, բայց իրենց ֆինանսական կապիտալը ի պահ են դնում օտար երկրներում, որպեսզի Հայաստանում «նավը խորտակվելուց» հետո իրենք շարունակեն իրենց ապահով կյանքը վայելել:

Օտար ներդրումները խրախուսվում են միայն խոսքով, բայց գործնականում խոչընդոտվում կոռումպացված օրենքների եւ բյուրոկրատական քաշքշուկների միջոցներով: Նույնիսկ շատ հայրենասեր ներդնողներ, աշխարհի տարբեր վայրերից, չափազանց դառը փորձառություններ են ունեցել, երբ փորձել են գումար ներդնել Հայաստանի տնտեսության մեջ: Հետաքրքրական է իմանալ, քանի՞ սփյուռքահայ պետք է խաբվի, հուսալքվի, կամ սպառնալիքների ենթարկվի, որպեսզի իշխանությունները գլխի ընկնեն, որ անհրաժեշտ է օտար ներդրումների համար ստեղծել հանդուրժելի մթնոլորտ եւ պայմաններ:

Հայրենասիրության մասին կոչերն այլեւս չեն կարող խայծ դառնալ Հայաստանում ներդրումներ կատարելու համար: Դատարաններն իրենց կոռումպացված դատավորներով չեն նպաստում օրենքի իշխանության ձեւավորմանը, որն անհրաժեշտ է ստեղծելու համար հասարակության միջին խավը, որն էլ իր հերթին որեւէ երկրի տնտեսության ողնուծուծն է:

Տոնախմբությունները, ցուցադրական հանդիսություններն ու օտար բարձրաստիճան անձնավորություններին տրված պատիվները խաբուսիկ արտաքին փայլ են տալիս լոկ, մինչդեռ կիսաքաղց ժողովուրդը լքում է երկիրը եւ հեռանում՝ թողնելով, որ հայրենիքը դեմ առ դեմ կանգնի «լինե՞լ, թե՞ չլինել» շեքսպիրյան հարցականի առաջ:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ. Հ.Ծ.

# Անհատն ու հասարակությունը

*2-րդ էջից*

Մի անուղղելի իդեալիստ շարունակում է ազգափրկության գաղափարների՝ կոնսերվատիվ հեղափոխության փորձը, նախ եւ ամենակարեւորը՝ մարդկանց գիտակցության մեջ. թվում է Ֆեյսբուքը ամենաճիշտ վայրն է: Արձագանքները, սակայն, բնավ չեն հավակնում կրիտիկական զանգված ապահովելուն: Բայց նա շարունակում է: Այս համբերությունը՝ Արծրուն Պեպանյանի, մի պատ կճեղքի, ու դա հուսադրում է:

Ֆեյսբուքում օրերս հայտնվեց լուրը՝ արձակագիր Լեւոն Խեչոյանի նախագահական շքանշանը մերժելու: Պատճառը՝ երկրում տիրող վիճակը՝ շարունակվող, օր-օրի աճող արտագաղթը, զինակից՝ ազատամարտիկ ընկերների՝ սոցիալական կյանքին այլեւս չդիմացող բողոք-նստացույցն էր: Կյանքի, երկրի նկատմամբ իր վերաբերմունքը գրականությամբ Լեւոնն արդեն արտահայտել է, դա մեր ներկայի, մեր հոգսի, ցավի ճշմարտապատում արտացոլանքն է: Բայց ամենակարեւորը՝ իր ապրած կյանքով է հաստատում նա դա՝ պատերազմին կամավոր իր մասնակցությունից մինչեւ ստեղծագործելու կերպն ու մտածողությունը, ինքնակեղեքման հասնող շիտակ վերաբերմունքը, ամենօրյա կենսակերպը:

Դժվար է: Հետեւանքները՝ ժամանակակից հասարակության մեջ ու երբեւէ՝ ակնհայտ փորձված ու գիտակցված են: «Օ՜, փշոտ է ճանապարհդ»,- կասեր բանաստեղծը: Բայց, ինչ արած, երբ այլկերպ չես կարող, արմատներն այդ գիտակցության, շատ խորն են խրված:

«Իսկ ի՞նչ է փոխվելու դրանից, մի՞թե արտագաղթը նվազելու է», հուսահատվածի, կոմֆորմիստի, թե՞ օպտիմիստի հարցադրումը ականկնկալ չէր: «Նա իր վարքով արժանապատիվ ապրելու օրինակ է տալիս հոգսից կքած մեր հասարակությանը», լսվեց մի պատասխան: Դրսից մեկը գրեց. «Էդ անտեր ֆորպոստում դեռ այդպիսի՞ք կան», մեկ ուրիշը՝ «Գիտենք՝ լավ գրող է: Փաստորեն, ինչպես գրում, այնպես էլ ապրում է»»: «Բոլորը հիացած են իրենով, ինչպես պատերազմում կռվեց, այնպես էլ շարունակում է ապրել», ասացին մի քանի մտավորական:

Մի դպրոցի ուսուցիչ կայքերից մեկում նախապես կարդալով շքանշանի ներկայացվածների ցուցակը՝ տագնապել էր՝ մի՞թե նա կվերցնի այդ պարգեւը: Զարմանալի՞ է: Ո՛չ: Գրողն իր կերպարը այդպես է ձեւավորել իր ստեղծագործությամբ, հասարակական գործունեությամբ, իր կյանքով: Եվ պարտավոր է, ինչպես սփյուռքահայերն են ասում, որքան էլ դժվար է, մնալ «պատնեշին վրա»: Տագնապի պատճառն այդ մարդու նրա հանդեպ հավատը կորցնելու վախն էր իհարկե, այսինքն՝ պահպանել հույսը, թե այդպիսիք դեռ կան:

Կնշանակի՝ հասարակությունը պետք ունի արժանապատիվ ապրող մտավորականների: Նման անհատները գիտակցում են պատասխանատվության իրենց բաժինը, միաժամանակ եւ հասարակության անխուսափելի վերաբերմունքը՝ որեւէ շեղում իրենց չի ներվելու: Մյուսներին՝ այո, իրենց՝ ոչ: Ուստի եթե գրողն այդպես չվարվեր, կնշանակեր խաչ քաշել իր կենսագրության եւ ստեղծագործության վրա: Այսպես մտածելու համար կամք ու տոկունություն է պետք, որովհետեւ կյանքը «կատակ» չէ, եւ փորձությունները ավելի են կուտակվում այդժամ:

Արդյոք որեւէ դեր ունի՞ հասարակությունը, բացի հիանալ-հուզվելուց, կամ խոր հոգոց հանելուց՝ թե հույսերն արդարացան ու ինքը չսխալվեց, եւ որ պատնեշի վրա դեռ մնացողներ կան: Կամ էլ բութ վստահությամբ շարունակի նույն վերաբերմունքը, թե կդիմանան նրանք, ու փարիսեցիաբար սփոփվի, թե խոնարհներին Աստված է պահում (վաղուց անցել են այսպես մտածելու եւ այսպես ապրելու ժամանակները): Հասարակությունը, այնուամենայնիվ, իր ստացած բարոյական սնունդը փոխհատուցելու պարտք ու պատասխան ունի: Եթե բնության անհետացող տեսակները հայտնվում են ուշադրության կենտրոնում ու պահպանության տակ, ինչո՞ւ մարդկայինը անտեսվում է: Ժամանակն է, արդ, որ հասարակությունն իր պահպանության տակ առնի նաեւ մարդկային անհետացող հազվագյուտ հատկանիշները, պահպանելու դրանք նախ եւ առաջ իր համար՝ ամայության սարսուռը վերստին ու վերստին չապրելու...

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

# Թուրքիայում ծայր առած անկարգությունը քեմալականության մարտահրավերն է վարչապետ Էրդողանին

*Նա քեմալականներին զրկել է երկիրը հետնաբեմից կառավարելու մենաշնորհից*



PHOTOLURE / Daily News

Նախորդ համարում, անդրադառնալով Թուրքիայի 67 քաղաքներում տեղի ունեցած անկարգություններին, ընդգծել էինք, որ չնայած դրանց հակակառավարական բնույթին, Թաքսիմ հրապարակը Թահրիր չի դառնա: Պարզապես դարձնելու փորձեր են արվում: Ըստ երեւույթին Արեւմուտքը դրա ցանկատեսությունն ունի կամ վարչապետ Էրդողանին զսպաշապիկ հագցնելու նկրտում, որ կառավարելի դարձնի:

Անկարգություններին Սպիտակ տան, Եվրոմիության, Միջազգային ներում կազմակերպության կայծակնային արձագանքը Էրդողանի կառավարությանը հասցեագրված ողջամտության կոչով դրա վկայությունն է, էլ չենք խոսում աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների բարձրացրած աղմուկի մասին:

Հասկանալի է, որ Ստամբուլի Թաքսիմ հրապարակի զբոսայգում ծայր առած եւ երկրով մեկ տարածված այս անկարգություններին արձագանքել են նաեւ արվեստի աշխարհահռչակ այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Մադոննան, Թոմ Յորքը, դերասանուհի Թիլդա Սուինթոնը, դերասան Բրյուս Ուիլլիսը, գրող Նեյլ Գեյմանը, դատապարտելով ցուցարարների հանդեպ թուրք ոստիկանության բռնությունները, իսկ ամերիկացի լեզվաբան Նուամ Չոմսկին այս բռնությունները համարել է Թուրքիայի պատմության ամենաամոթալի դրվագը: Հավանաբար այս անձնավորությունը բացարձակապես անծանոթ է Թուրքիայի պատմությանը:

Ինչ վերաբերում է բռնություններին, իհարկե ոստիկանությունը գործադրել է ցուցարարների հանդեպ հենց Թաքսիմի զբոսայգում մայիսի 29-ի վաղ առավոտյան: Ավելին, ոստիկանները արտասվաբեր գազ են օգտագործել ծառերի հատումը կասեցնելու համար վրանի մեջ այգում գիշերող ցուցարարների դեմ, ապա եւ այրել են վրանները:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ ցուցարարների խնդիրը սոսկ այգու ծառերը չեն, այլեւ Թաքսիմ հրապարակը վերակառուցելու վարչապետ Էրդողանի նախագիծը: Դա ենթադրում է քանդել Աթաթուրքի անվան մշակույթի պալատը, դրա տեղը կառուցել օպերային թատրոն, վերականգնել 1780 թվին կառուցված «Սելիմիե» զորանոցը, որը 1938-ին քանդել եւ տեղը փոքրիկ մարզադաշտ էին կառուցել:

Ի դեպ, «Գեզի» այգին էլ, որտեղ վարչապետ Էրդողանը մտադիր է մզկիթ կառուցել, նախկինում եղել է Սուրբ Հակոբ հայկական գերեզմանոցի տարածք համանուն եկեղեցիով: Դա զորանոցի հետ միաժամանակ է քանդվել: Թաքսիմի վերակառուցման Էրդողանի նախագծում հայկական գերեզմանոցի եւ Սուրբ Հակոբ եկեղեցու մասին իհարկե որեւէ խոսք չկա, ոչ էլ «Գեզի» զբոսայգում բռնկված եւ հակակառավարական շարժման վերածված ցույցերի մասնակիցներն են դա նշում:

Ցուցարարների զորավիգ կանգնող աշխարհահռչակ արվեստագետներն էլ շրջանցում են ցուցարարների անկարգությունները: Որքան էլ սրանք համարվեն համաժողովրդական շարժման մասնակիցներ, անկարգություն այնուամենայնիվ արել են: Օրինակ, մայիսի 31-ից մինչեւ հունիսի 2-ը միայն Իզմիրում ցուցարարները լուրջ ավերածություն են պատճառել 31 բանկի, 42 առեւտրական օբյեկտի: Նրանց գործունեության հետեւանքով վնասվել են 12 սեփական ավտոմեքենա, քաղաքային 11 ավտոբուս, տուժել է վարչական մեկ շենք: Վնասված մեքենաներից 4-ը ոստիկանության մեքենա է: Այդ ընթացքում վիրավորվել է 33 ոստիկան, մեկը՝ ծանր:

Վիրավորված ցուցարարների ընդհանուր թիվը անկարգությունների թատերաբեմ դարձած բոլոր քաղաքներում, ըստ պաշտոնական տվյալների 53 է, մեկը՝ վերակենդանացման բաժնում: 939 ցուցարար ձերբակալվել է: Պաշտոնական տվյալները, ինչ խոսք, չեն համապատասխանում ցուցարարների տվյալներին, որոնք էլ սակայն պարտադիր չէ, որ համապատասխանեն ճշմարտությանը:

Այլ կերպ՝ գործ ունենք տեղեկատվության պատերազմի հետ: Սակայն ինչ էլ լինի, ցուցարարների խնդիրը Թաքսիմի զբոսայգու ծառերը չեն: Թերեւս նրանք կարող էին հանդուրժել հրապարակում մզկիթի կառուցումը, սակայն դրա հետ վարչապետ Էրդողանը առանց վերականգնելու քանդում է նաեւ Աթաթուրքի անվան մշակույթի պալատը: Ըստ երեւույթին այս հանգամանքն էլ որպես իսլամականների մարտահրավեր են ընկալում քեմալականները:

Չմոռանալ, որ Քեմալ Աթաթուրքի հիմնադրած Ժողովրդահանրապետական կուսակցությունը նրանց ներկայացուցիչն է, որը անկախ կառավարող կուսակցության փոփոխությունից, քեմալական բյուրոկրատիայի միջոցով հետնաբեմից կառավարել է Թուրքիան, կառավարումը դարձել է նրա մենաշնորհը:

Վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունն է, որ վերջին 10 տարիներին գտնվելով իշխանության ղեկին, Ժողովրդա-հանրապետական կուսակցությանը զրկում է այդ մենաշնորհից, զուգընթաց դրան երկիրը հետնաբեմից կառավարելու հնարավորությունից զրկվում են նաեւ քեմալականները: Հաշվի առնելով այս ամենը, կարելի է ենթադրել, որ Թաքսիմի զբոսայգում ծայր առած եւ երկրով մեկ տարածված անկարգությունները ոչ այլ ինչ են, քան քեմալականների մարտահրավերը հանուն երկրում դիրքերի պահպանման:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

## Բարզանին Բաղդադին սպառնում է Քրդստանի անկախացմամբ

**Իրաքյան Քրդստանի ինքնավար շրջանի նախագահ Մասուդ Բարզանին հայտարարել է, որ Բաղդադի հետ վարվող բանակցությունների նոր փուլի ձախողման դեպքում իրաքցի քրդերը ստիպված կլինեն փնտրել Իրաքի նկատմամբ «նոր մոտեցում»: Խոսքը, անշուշտ, Իրաքի հյուսիսում քրդական անկախ պետություն հռչակելու մտադրության մասին է: Բարզանին նշել է, որ մայիսին վերսկսված բանակցությունները տարաձայնությունների հաղթահարման վերջին հնարավորությունն են:**

**Իրաքի իշխանությունները դժգոհ են, որ երկրի հյուսիսում գտնվող նավթի հարուստ հանքավայրերից ստացվող եկամուտները մուտք չեն գործում պետական գանձարան: Բաղդադի եւ Էրբիլի միջեւ գոյություն ունեն նաեւ տարածքային տարաձայնություններ: Իրաքյան Քրդստանը նաեւ ապաստան է դարձել վարչապետ Նուրի ալ Մալիքիի կառավարության հալածանքներին ենթարկվող անձանց համար, նշում է newsru.co.il կայքէջը:**

**Քրդստանում արդյունահանվող նավթի մեծ մասն առաքվում է Թուրքիա: Այդ երկրի վարչապետ Ռեջիփ Թայիփ Էրդողանը, չնայած թուրքաբնակ քրդերի նկատմամբ վարվող կոշտ քաղաքականությանը, աստիճանաբար ընդլայնում է կապերը Իրաքյան Քրդստանի ինքնավար շրջանի հետ:**

**Աշխարհում ապրող մոտ 25 մլն քրդերը չունեն սեփական պետություն: Քրդաբնակ տարածքներ կան Թուրքիայում, Սիրիայում, Իրանում եւ Իրաքում:**

**«Անկախությունը քուրդ ժողովրդի գլխավոր նպատակն է: Մենք լիրավ ենք ունենալու սեփական պետություն: Վստահ եմ, որ միայն այդպես կարելի է լուծել քրդական հարցը», հայտարարել է Բարզանին:**

Պ.Ք.

ԺՆԵՎ

# ՄԱԿ-ի հանձնաժողովը հավաստեց Սիրիայում քիմիական զենքի կիրառումը

**Սիրիայի հակամարտության ընթացքում քիմիական զենք է օգտագործվել՝ այս հետեւությունն է արվում երեքշաբթի օրը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի հրապարակած զեկուցագրում:**

**Փաստաթղթում նշվում է, որ բավարար հիմքեր կան խոսելու մարտական թունանյութերի օգտագործման դեպքերի մասին: Իսկ դա պատերազմական հանցագործություն է: 2013 թ. հունվարի 15-ից մինչեւ մայիսի 15-ը ընդգրկող 29-էջանոց փաստաթղթի հեղինակները խոստովանում են, որ «հակակառավարական զինված խմբավորումները հավանաբար հայթայթել են քիմիական զենք եւ օգտագործում են այն»:**

**Կառավարական զորքերի առնչությամբ հանձնաժողովը հաղորդում է, որ «կառավարությունն իր տրամադրության տակ ունի քիմիական զենք»:**

**Զեկուցագրում վտանգավոր է համարվում ոչ միայն իշխանությունների կողմից քիմիական զենքի օգտագործման հնարավորությունը, այլեւ այն, որ տվյալ զենքը կարող է հայտնվել հակակառավարական ծայրահեղական կազմավորումների ձեռքին, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:**

# ԱՄՆ-ը Հորդանան կուղարկի Patriot-ներ եւ F-16 կործանիչներ

**Պենտագոնը պաշտոնապես հայտարարել է, որ ամերիկացիները Հորդանան կուղարկեն Patriot հրթիռային համալիրներ եւ F-16 կործանիչներ:**

**Patriot-ները եւ F-16-ները կմասնակցեն համատեղ ամերիկա-հորդանանյան զորավարժություններին, իսկ «դրանց ավարտից հետո, Հորդանանի իշխանությունների համապատասխան խնդրանքի դեպքում, այդ սպառազինությունների մի մասը կարող է մնալ երկրում», հայտարարել են Պենտագոնում:**

**Ամերիկյան պաշտպանական գերատեսչության ներկայացուցիչների խոսքերով, կործանիչները եւ հրթիռային համալիրները կամրապնդեն Հորդանանի պաշտպանական ներուժը հարեւան Սիրիայում շարունակվող քաղաքացիական պատերազմի պայմաններում:**

**Ֆրանսպրես գործակալությունը նշում է, որ ամերիկյան հրթիռային համալիրների եւ կործանիչների առաքումը կարող է հերթական անգամ տեղիք տալ ենթադրելու, որ ԱՄՆ-ը պատրաստվում է ռազմական միջամտություն իրականացնել Սիրիայում: Ամերիկացիները Սիրիայում ցամաքային գործողության այդ տարբերակը չեն բացառում, սակայն քանիցս հայտարարել են, որ առայժմ խոսք չկա իրադարձությունների նման ընթացքի մասին:**



**2013-ի սկզբներին Patriot զենիթահրթիռային համալիրների մի քանի մարտկոց տեղաբաշխվել էր Թուրքիայում, որը նույնպես սահմանակից է Սիրիային: Այն ժամանակ ՆԱՏՕ-ն եւ Թուրքիան հայտարարել էին, թե հրթիռային կայանքները տեղաբաշխվում են բացառապես պաշտպանական նպատակներով: Սակայն Սիրիան եւ Ռուսաստանը այդ քայլը գնահատել էին որպես սիրիացիների ներքին գործերին միջամտելու ռազմավարության բաղկացուցիչ մաս:**

Պ. Ք.

# Չին միլիոնատերերը նախընտրում են Ֆրանսիան

**Չին միլիոնատերերը սկսել են ավելի ու ավելի ճանապարհորդել Եվրոպայում եւ մանավանդ Ֆրանսիայում: Նրանք նախընտրում են պերճանքի առարկաներ ձեռք բերել ավելի շուտ Ֆրանսիայում, քան ԱՄՆ-ում կամ Սինգապուրում: Այդ են վկայում Շանհայում գործող «Հուրուն ռիփորթ» ընկերության 2012 թ. հետազոտության արդյունքները, որոնց անդրադառնում է «Ֆիգարո» թերթը:**

**Ներկայումս Չինաստանում ապրում է 2,8 մլն դոլարային միլիոնատեր: Հարուստ չինացիների զբոսաշրջային երթուղիներում առաջին տեղում Ֆրանսիան է, որին հաջորդում են ԱՄՆ-ը, Սինգապուրը, Շվեյցարիան, Մեծ Բրիտանիան եւ Իտալիան: Այդ զբոսաշրջիկների կեսը յուրաքանչյուր ճամփորդության ընթացքում ծախսում է ավելի քան 5000 դոլար կամ 3800 եվրո:**

**Հետազոտության մեջ վկայակոչվում են անմաքս առեւտրի համաշխարհային առաջատար Global Blue-ի տվյալները, որոնց համաձայն ներկայումս չինացի զբոսաշրջիկները ձեռք են բերում աշխարհում վաճառվող բոլոր անմաքս ապրանքների 1/4-ը: Հարցման ենթարկված միլիոնատերերի 4/5-րդը մտադիր է զավակներին արտերկիր ուղարկել, որտեղ նրանք երկրորդ առանձնատուն ձեռք բերեն Միացյալ Նահանգների արեւմտյան ափին, Հոնկոնգում, Սինգապուրում, Լոնդոնում եւ Սիդնեյում:**

**Եվրոպայում դաժան մրցակցություն է ծավալվել չինացի հարուստ զբոսաշրջիկներին հրապուրելու նպատակով: 2012-ի հոկտեմբերին Ֆրանսիան եւ Գերմանիան այցագրային ընդհանուր կենտրոն բացեցին Պեկինում, որտեղ դյուրացնեն եւ արագացնեն Շենգենյան տարածք մուտք գործելու արարողակարգը: Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը այս տարվա ապրիլին հայտարարեց, որ արտերկրում զբոսաշրջիկների ծախսերի գծով 2012-ին Չինաստանն աշխարհում առաջինն է եղել՝ 102 մլրդ դոլար կամ 75,5 մլրդ եվրո:**

**Կազմակերպությունն այդ ռեկորդը բացատրում է չինացիների եկամուտների աճով եւ արտերկիր մեկնելու պայմանների դյուրացմամբ: Եթե 2000 թ. արտասահմանում ճամփորդել է 10 մլն չինացի, ապա 2012 թ. նրանք արդեն 83 միլիոն էին: Միեւնույն ժամանակ արտերկրում նրանց կատարած ծախսերն ութնապատկվել են:**

Պ. Ք.

# Մարզական

## Մարկոս Պիզելին ու Նորայր Ասլանյանը լավատեսորեն են տրամադրված

### *Մնում է այդ լավատեսությունն ամրապնդել բարձրակարգ խաղով*

Հայաստանի ազգային հավաքականն Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում սկսել է նախապատրաստությունը հունիսի 7-ին Մալթայի ընտրանու հետ կայանալիք աշխարհի առաջնության ընտրական մրցախաղին: Առաջին մարզմանը մասնակցել են հավաքի հրավիրված բոլոր ֆուտբոլիստները, բացառությամբ Յուրա Մովսիսյանի, որը դեռ չէր ժամանել ԱՄՆ-ից:




Դա ազգային հավաքականի առաջին եւ միակ բաց մարզումն էր, որին ներկա էին մեծ թվով ֆուտբոլասերներ: Մարզումից հետո ազգային հավաքականի ֆուտբոլիստներ Մարկոս Պիզելին եւ Նորայր Ասլանյանը ճեպազրույց ունեցան լրագրողների հետ:

**Մարկոս Պիզելի** - Առաջիկա ընտրական մրցախաղերում մենք պայքարելու ենք միայն հաղթանակի համար: Պետք է լավ աշխատենք մարզումների ժամանակ, որպեսզի կարողանանք 6 միավոր վաստակել: Հարկավոր է մտածել, որ մենք Դանիայից ուժեղ ենք: Ընտրական նախորդ մրցաշարում հավաքականը շատ լավ էր խաղում: Իսկ ահա այս մրցաշարում հավաքականի խաղը լավ չի ստացվում, դժվարությամբ ենք հաղթում: Մենք պետք է ամեն ինչ մոռանանք ու տրամադրվենք պայքարի:

Երբ «Կրասնոդարից» հրավեր ստացա, համաձայնվեցի տեղափոխվել: Արդեն 28 տարեկան եմ եւ խաղադաշտում ինձ խաղային շատ ժամանակ է անհրաժեշտ: Իսկ «Կուբանում» ոչ միշտ էի ընդգրկվում թիմի մեկնարկային կազմում: Ինձ խաղային պրակտիկա է անհրաժեշտ, որպեսզի օգտակար լինեմ նաեւ հավաքականին:

**Նորայր Ասլանյան** - Չէի սպասում, որ Հայաստանում կարող է ֆուտբոլային այսպիսի ակադեմիա լինել, որում հիանալի պայմաններ են ստեղծված: Նույնիսկ Հոլանդիայում նման բան չէի տեսել: Ուղղակի հիացած եմ: Առաջին անգամ եմ Հայաստանում, որտեղ ինձ շատ ջերմ ընդունեցին: Հիացած եմ Երեւանով: Չէի սպասում, որ այսքան գեղեցիկ կլինի քաղաքը: Հավաքականի որոշ ֆուտբոլիստների հետ արդեն շփվել եմ, շրջել ենք Երեւանում: Նրանց հետ արդեն ընկերական հարաբերություններ եմ հաստատել:

Առաջին անգամ հավաքականին միացել էի այս տարվա փետրվարին Ֆրանսիայում: Այն ժամանակ ընդամենը 3 օր էր հատկացված Լյուքսեմբուրգի հետ ընկերական հանդիպմանը նախապատրաստվելու համար:

Հավաքականը մարտականորեն է տրամադրված: Թեեւ ֆուտբոլում ամեն ինչ հնարավոր է, սակայն կարծում եմ, որ Մալթային անպայման պետք է հաղթենք: Դանիայի հավաքականը թեեւ շատ ուժեղ է, սակայն նրա նկատմամբ էլ կարող ենք հաղթանակ տոնել: Մենք ուժեղ հավաքական ենք եւ կարող ենք 6 միավոր վաստակել:

«Էմենի» հետ պայմանագիրս ավարտվել է եւ այժմ բանակցություններ են ընթանում ակումբի հետ: Սակայն այլ տարբերակներ եւս դիտարկում եմ: Իմ ծառայություններով հետաքրքրված են Հոլանդիայի բարձրագույն խմբի ակումբները, որոնց ներկայացուցիչները պատրաստակամ են մեկնել Դանիա՝ դիտելու իմ ելույթը: Կարծում եմ, որ Դանիայի խաղից հետո ամեն ինչ պարզ կլինի:

**ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ**

## «Լիվերպուլը» մտադիր է հրավիրել Մխիթարյանին

**Բրիտանական լրատվամիջոցների տեղեկացմամբ, «Լիվերպուլը» պատրաստվում է պաշտոնական առաջարկ կատարել «Շախտյորին»՝ Հենրիխ Մխիթարյանին գնելու հարցով: Անգլիական ակումբը պատրաստ է հայ ֆուտբոլիստի դիմաց 22 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Հիշեցնենք, որ վերջերս «Շախտյորի» գլխավոր մարզիչ Միրչա Լուչեսկուն հայտարարել էր, որ Մխիթարյանի տրանսֆերային նվազագույն արժեքը 30 մլն եվրո է:**



**Ենթադրվում է, որ «Լիվերպուլում» Մխիթարյանը պետք է փոխարինի Լուիս Սուարեսին, որը հավանաբար կհեռանա թիմից: Սակայն նույնիսկ եթե նա մնա թիմում, ապա գումարի մի մասը «Լիվերպուլը» նախատեսում է ստանալ Էնդի Քերոլի վաճառքից:**

## Մեդալների հարուստ ավարով

**Բառնաուլում անցկացված ձյուդոյի միջազգային մրցաշարում հաջող ելույթներ ունեցան հայ ձյուդոյիստները: Երիտասարդների եւ պատանիների մրցավեճում հաղթողներ դարձան Գոռ Հակոբյանը, Աշոտ Մնացականյանը, Նարեկ Շատվերյանը, Գրիգոր Սահակյանը, Գրիգոր Մխիթարյանը, Գարիկ Հարությունյանն ու Դավիթ Ղազարյանը: Մրցանակային 2-րդ տեղ գրավեց Վահե Ղազարյանը, իսկ բրոնզե մեդալով պարգեւատրվեց Դավիթ Նալբանդյանը:**

## 3 հայ շախմատիստներ կես միավոր են զիջում առաջատարներին

Հնդկաստանում ընթացող շախմատի մրցաշարի 8-րդ տուրում Դավիթ Պետրոսյանը ոչ-ոքի խաղալով Գեորգի Տիմոշենկոյի հետ, վաստակեց 6 միավոր: Նույնքանի արդյունք ունեն նաեւ Լեւոն Բաբուջյանն ու Զավեն Անդրեասյանը, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Շիվանանդային ու Վահե Բաղդասարյանին: Վերջինս 5 միավորով 32-րդ տեղում է: Նույնքանի արդյունք ունի նաեւ Գեւորգ Հարությունյանը, որը հաղթեց Անիրուդա Դեշպանդեին:

Արմինե Բաբայանը հաղթելով Կումար Վինոդին, վաստակեց 4 միավոր: Իսկ Մարիա Գեւորգյանը պարտվեց Ռակեշ Կուլկարնիին: Մարիան 3 միավոր է վաստակել:

Մրցաշարային աղյուսակը 6,5-ական միավորով գլխավորում են վրացի գրոսմայստերներ Միխեիլ Մչեդլիշվիլին եւ Լեւան Պանցուլայան:

## Արոնյանը հաղթեց միաժամանակյա խաղաշարում

Armchess.am-ի տեղեկացմամբ, Լեւոն Արոնյանը Գերմանիայի Մայսեն քաղաքի ճենապակու թանգարանում ժամացույցներով միաժամանակյա խաղաշար է անցկացրել այդ երկրի երիտասարդական հավաքականի վեց անդամների հետ, որոնցից 4-ը միջազգային վարպետներ էին: Լեւոնը հաղթեց 4,5-1,5 հաշվով: Նա շահեց 3 պարտիա, մյուսներն ավարտեց ոչ-ոքի:



## «Իմպուլսը» հրաժարվում է առաջնության մասնակցությունից

Դիլիջանի «Իմպուլսը» նամակով դիմել է ֆուտբոլի ֆեդերացիային, որում տեղեկացնում է, որ հրաժարվում է մասնակցել 2013/14-ի ՀՀ առաջնությանը: Պատճառն ակումբի ղեկավարության դժգոհությունն է մրցավարությունից: Մասնավորապես «Իմպուլսը» պահանջել է վերախաղարկել «Գանձասարի» հետ առաջնության վերջնագծում կայացած հանդիպումը, որն ըստ ակումբի ղեկավարության անցել էր կողմնակալ մրցավարության պայմաններում:

Հիշեցնենք, որ Դիլիջանի «Իմպուլսը» ստեղծվել էր 2009-ին Վարուժան Սուքիասյանի նախաձեռնությամբ: Ակումբի սեփականատերը ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյանն է, իսկ նախագահը՝ նրա որդին՝ Տիգրան Հակոբյանը:

Ընդհանրապես նոր մրցաշրջանի մեկնարկի շեմին առաջնության մասնակից որոշ թիմերի ճակատագիրն անորոշ է: «Ուլիսը» հայտնվել է ֆինանսական բարդ իրադրությունում, ուստի որոշել է հրաժարվել փորձառու մի խումբ ֆուտբոլիստներից՝ թիմում ընդգրկելով միայն երիտասարդների: «Բանանց» ակումբի նախագահ Սարգիս Իսրայելյանը վերջերս հրաժարական տվեց եւ առայժմ հայտնի չէ, թե ի՞նչ ճակատագիր է սպասում թիմին: Խոսակցություններ կան, որ ակումբի նախագահի պաշտոնը ստանձնելու է «Փյունիկի» գործադիր տնօրեն Կարեն Հարությունյանը: Ըստ որոշ աղբյուրների էլ, «Բանանցը» կարող է ղեկավարել Կարեն Նալբանդյանը:

«Արմավիրայի» սնանկացումից հետո ֆինանսական խնդիրներ են ծագել նաեւ «Միկայում», որի հովանավորը Միքայել Բաղդասարովն է: Այնպես որ առայժմ դժվար է գուշակել, թե 2013/14-ի ՀՀ առաջնությանը քանի թիմ կմասնակցի:

## Մոուրինյուն պաշտոնապես գլխավորեց «Չելսին»

Ժոզե Մոուրինյուն պաշտոնապես գլխավորեց «Չելսին»: Նա ակումբի հետ քառամյա պայմանագիր է կնքել: Մոուրինյուի տարեկան աշխատավարձը հարկերը հանելուց հետո կկազմի 8,5 մլն ֆունտ ստեռլինգ: Պորտուգալացի մասնագետը կդառնա Անգլիայի պրեմիեր լիգայի ամենաբարձր վարձատրվող մարզիչը:

Մոուրինյուն այն չորս մարզիչներից մեկն է, որին հաջողվել է 4 տարբեր երկրներում չեմպիոն թիմ պատրաստել: Նրա գլխավորությամբ չեմպիոնական բարձունքը նվաճել են «Պորտոն», «Չելսին», «Ինտերը» եւ «Ռեալը»: Նախկինում նման հաջողության էին հասել Տոմիսլավ Իվիչը, Էռնստ Հապելը եւ Ջովանի Տրապատոնին:

Մոուրինյուն 2-րդ անգամ է ստանձնում «Չելսիի» ղեկը: Նրա օրոք «Չելսին» 2 անգամ չեմպիոն է հռչակվել, նվաճել է Անգլիայի գավաթը:

## Մելքումյանն ու Մխիթարյանը զիջեցին դիրքերը

Ալբենայի շախմատի մրցաշարի 3-րդ տուրում առաջատարների շարքում գտնվող Հրանտ Մելքումյանն ու Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Իգոր Գլեկի եւ Վասիլե Սանդուլեացի հետ: Նրանք վաստակեցին 2,5-ական միավոր: Իսկ առաջատարներն են 3 միավոր ունեցող Կոնստանտին Լուպուլեսկուն, Բորիս Չաթալբաշեւը, Պրասան Վիշնուն, Սանդրո Մարեկոն, Վասիլ Սպասովը եւ Եվգենի Սվեշնիկովը:

Տիգրան Պետրոսյանը հաղթելով Զորան Արսովիչին, վաստակեց 2,5 միավոր: Տուրը հաղթական էր նաեւ Ավետիք Գրիգորյանի համար, որի մրցակիցը Օլգա Դոլժիկովան էր: Ավետիքն ունի 2 միավոր:

## Եվս երեք կորուստ

**Մինսկում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի հավաքականի եւս 3 անդամներ դուրս մնացին հետագա պայքարից: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Եվրոպայի նախկին չեմպիոն Հովհաննես Դանիելյանի մենամարտը Ռուսաստանը ներկայացնող տիտղոսակիր բռնցքամարտիկ Դավիթ Հայրապետյանի հետ: Վերջինս հաղթելով, կշարունակի պայքարը մինչեւ 49 կգ քաշային կարգում:**

**Պայքարից դուրս մնաց նաեւ Նարեկ Աբգարյանը (52 կգ), որը պարտվեց իռլանդացի Միչել Կոնլանին: Հովհաննես Բաչկովն էլ (60 կգ) պարտվեց Գերմանիան ներկայացնող Կաստրիոտ Սոպային: Իսկ ահա Բելառուսը ներկայացնող Վազգեն Սաֆարյանցը 2-րդ հաղթանակը տոնեց թուրք Ֆարկան Սեմիսի հետ մենամարտում:**

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Դիմորդ. «Պետք է ներառվեին հարցեր, որոնք ոչ թե մեխանիկական անգիրի, այլ ջանասիրաբար աշխատելու տեղիք կտային»




*1-ին էջից*

**ԿԳ նախարարն ընդգծեց, որ հայոց լեզվի եւ գրականության քննությունը բուհական ընդունելության ամենազանգվածային քննություն է եւ հանրային ընկալման մեջ ամենասպասվածն ու անհանգստացնողը, որի հետ կապված մասնագիտական վեճերը սովորաբար անխուսափելի են լինում, քանի որ մասնագիտական հանրույթը դժվարությամբ է գալիս ընդհանուր հայտարարի. «Ինչպես գիտեք, մասնագիտական վեճ էր ծավալվել. տասնյակից ավելի քննական առաջադրանքներ, որոնք խնդրահարույց էին համարվում, հանվել են շտեմարաններից: Հեղինակների հավաստիացմամբ թեստերում չեն լինելու երկիմաստ կամ կրկնակի ճիշտ պատասխան ենթադրող առաջադրանքներ: Քննական թեստը գաղտնի է, եւ, բացի խոստումից ու հավաստիացումից, այս պահին այլ բան վստահաբար հավաստելը դժվար է»:**

**«Ազգ»-ը դիմորդներից տարատեսակ կարծիքներ լսեց. «Թեստերը սպասվածից հեշտ էին», «Եթե լավ պարապեիր, արդյունքը լավ կլիներ»: Սակայն որոշ դիմորդներ էլ դժգոհում էին հարցերից, որոնք, ինչպես նշեցին, իրենց շփոթեցնելու համար էին ներառված, ինչպես նաեւ կային որոշ երկիմաստ առաջադրանքներ: Իսկ դիմորդներից Գայանե Ավդալյանը, որը ապագա լրագրող է, ասում է. «Հարգելի գիտության եւ կրթության պատվավոր ներկայացուցիչներ, դուք գո՞հ եք այսօրվա խայտառակությունից, ի՞նչ էր սա, դուք կարծում եք՝ մենք զոմբինե՞ր ենք: Վեց ամիս էր տրված հինգ հատորի անիմաստ ու այլմոլորակային հարցերը սովորելու համար: Մի քանի ամսվա ընթացքում ես ստիպված եմ լրիվ նոր հինգ դասագիրք անգիր անել: Գիտելիքներն ի մի բերելու, ամբողջացնելու փոխարեն ես դիմեցի մեխանիկական անգիրի տարբերակին, որովհետեւ շտեմարանի ամեն հարց իր գաղտնի եւ չբացահայտված կետերն ուներ, իր հիմար խնդիրները, իր անհասկանալի ու վիճելի կողմերը, որոնք, ես վստահ եմ, ի զորու չեն լուծելու անգամ թեստ կազմողները, ինչպես նաեւ բազմավաստակ ուսուցիչները»: Գայանեն նաեւ տխրությամբ նշում է, որ ինքը, լինելով ապագա լրագրող, որը տասը տարի չի ունեցել որեւէ խնդիր հայոց լեզվի հետ կապված, եւ այն քիչ աշակերտներից է, ում գրած շարադրությունն ուղարկվում էր բազմաթիվ հանրապետական մրցույթների, այսօր ստանում է իր համար զարմանալի ու տհաճ տասնվեց եւ կես միավոր:**




**Գայանեն նաեւ հորդորում էր, որ ներառվեին հարցեր, որոնք ոչ թե մեխանիկական անգիրի, այլ ջանասիրաբար աշխատելու տեղիք կտային:**

**Դիմորդը վրդոված նշում է նաեւ. «Ես իրավունք ունեմ, չէ՞, մինչ այժմ չիմանալու, որ բացի «Մաշտոց» հատուկ գոյականից կա նաեւ կենդանու մազ սանրելու գործիք»:**

**Քննության արդյունքները կհրապարակվեն 5 օր անց, իսկ քննական թեստի ճիշտ պատասխանները՝ քննության օրը, ԳԹԿ եւ ԿԳՆ պաշտոնական կայքերում:**

ԿԱՊ

# Orange-ն առաջարկում է ավելի գրավիչ պայմաններ ինտերնետի լրացուցիչ ծառայությունների համար

Հունիսի 1-ից Orange-ն ինտերնետի իր բաժանորդներին առաջարկում է ձեռք բերել լրացուցիչ փաթեթներ եւ ակտիվացնել ծառայություններ նախկինից ավելի գրավիչ պայմաններով:

Այսպիսով, Ինտերնետ Հիմա եւ MyFi ծառայությունների բաժանորդները կարող են ակտիվացնել «Եվս մեկ անգամ» ծառայությունը 3000 դրամով նախկին 4000 դրամի փոխարեն եւ ստանալ նույն



ծավալով գերարագ ինտերնետ, որը ստանում են ամեն ամիս՝ ըստ իրենց սակագնային պլանի: Օրինակ, Ինտերնետ Հիմա 9000 սակագնային պլանի դեպքում «Եվս մեկ անգամ» ծառայությունն ակտիվացնելիս բաժանորդը կստանա եւս 10 ԳԲ գերարագ ինտերնետի ծավալ: Չօգտագործված ինտերնետի ծավալը կփոխանցվի հաջորդ ամիս: Եվս մեկ անգամ ծառայությունը կարելի է ակտիվացնել՝ ուղարկելով OMT բանալի բառը 111 կարճ համարին:

Հաջորդ փոփոխությունը վերաբերում է «Արագ բեռնում» ծառայությանը, որը թույլ է տալիս բարձրացնել վերբեռնման արագությունը մինչեւ 2 Մբ/վ՝ անկախ նրանից, թե բաժանորդը որտեղ է օգտվում ինտերնետից: Այժմ Երեւան, Գյումրի, Վանաձոր եւ Էջմիածին քաղաքներում այս ծառայությունն ակտիվացնելիս բաժանորդները կկարողանան փաստաթղթեր, նկարներ եւ այլ նյութեր վերբեռնել ինտերնետ մինչեւ 5,76 Մբ/վ արագությամբ նախկին 2 Մբ/վ-ի փոխարեն: Արագ բեռնումը կարելի է ակտիվացնել ցանկացած ժամանակ՝ ուղարկելով HU բանալի բառը 111 կարճ համարին եւ վճարելով 2000 դրամ:

Orange-ը շարունակում է առաջարկել անվճար օգտվել ինտերնետից գիշերային ժամերին: Ինտերնետ Հիմայի, MyFi-ի եւ Ֆլայբոքսի բաժանորդները գիշերը ժամը 02:00-ից մինչեւ առավոտյան 08:00-ը կարող են օգտվել գերարագ ինտերնետից անվճար: Գիշերային ինտերնետ ծառայությունը կարելի է անվճար ակտիվացնել յուրաքանչյուր ամիս՝ ուղարկելով NI բանալի բառը 111 կարճ համարին:

Հիշեցնենք, որ Orange-ը միակ օպերատորն է, որը Հայաստանում շարժական ինտերնետի իր ողջ ծածկույթում առաջարկում է մինչեւ 21.6 Մբ/վ, իսկ Երեւանում, Գյումրիում, Վանաձորում եւ Էջմիածնում՝ մինչեւ 42.2 Մբ/վ ներբեռնման արագություն:

Բոլոր ծառայությունների մասին ավելի մանրամասն կարելի է իմանալ հետեւյալ հղումով. http://www.orangearmenia.am/internet/services/

# Հատուկ խնամքի տակ գտնվող հիվանդների դեղորայքը վաճառվել է ինքնարժեքից եռակի թանկ

*1-ին էջից*

Հանձնաժողովը պարզել է, որ «Կուրացիո» ընկերությունը, այն բոլոր դեպքերում, երբ բուժհաստատությունների կողմից հայտարարված պետական գնումների մրցույթներում հանդիսացել է միակ մատակարարը, հայտերում շատ բարձր գնային առաջարկ է ներկայացրել, իսկ այն դեպքերում, երբ մրցակից է ունեցել, գրեթե ինքնարժեքին հավասար գնով է դեղը վաճառել՝ արհեստականորեն խոչընդոտելով մրցակից ընկերության մուտքը շուկա: Փաստորեն, «Կուրացիոն» հատուկ խնամքի տակ գտնվող հիվանդների համար նախատեսված դեղորայքը վաճառել է ինքնարժեքից եռակի թանկ գնով:

Միաժամանակ, հանձնաժողովն ուսումնասիրել է «Կուրացիոյի» գնային քաղաքականությունը եւ բացահայտել, որ ընկերությունը մշտապես օգտվել է իր մրցակցային առավելությունից, բարձր գներով ապրանքը վաճառելով դեղատներին եւ հիվանդանոցներին: Մասնավորապես, մինչ զեղչի ստացումը ընկերության կողմից իրացվող «Նուտրիզոն սննդային թելիկներով 1 կկալ 500 մլ.» ապրանքի ինքնարժեքը կազմում էր 2080 դրամ, իսկ մանրածախ իրացման գինը՝ 4000 դրամ: Սակայն ընկերությունն ապրանքը կարողացել է ձեռքբերել զեղչով, եւ ինքնարժեքը նվազել է մինչեւ 1380 դրամ, սակայն մանրածախ ցանցում գինը մնացել է անփոփոխ: Այսինքն, ընկերությունը ինքնարժեքի նվազմանը համարժեք չի իջեցրել վաճառքի գները, ինչը մրցակցային օրենսդրության խախտում է:

Հանձնաժողովի որոշմամբ, շուկայում ունեցած գերիշխող դիրքի չարաշահման համար «Կուրացիո» ընկերությունը տուգանվեց 10 մլն դրամի չափով: Բացի դրանից, հանձնաժողովի առաջարկով, «Կուրացիո» ընկերությունը կհայտնվի գնումների «սեւ ցուցակում» եւ մի քանի տարի հնարավորություն չի ունենա մասնակցելու մրցույթներին:

# «Ռիչ Քոմփյութերսը» մոլորեցրել է սպառողներին

**Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի երեկ քննարկած հաջորդ հարցը առնչվում էր «Էյջ-Թի Էլեքտրոնիքս» ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելուն: Այդ ընկերությանը պատկանող «Ռիչ Քոմփյութերս» համակարգչային խանութ-սրահը գովազդի միջոցով ակնհայտորեն խաբել եւ մոլորեցրել է սպառողներին: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Էյջ-Թի Էլեքթրոնիքսը» հեռուստատեսությամբ ներկայացնում է գովազդ, ըստ որի միայն անձնագրով եւ սոցիալական քարտով հնարավոր է ապառիկով ձեռք բերել համակարգիչ: Սակայն պահանջում են նաեւ աշխատանքի վայրից տեղեկանք, պարտադիր վարկային պատմություն եւ այլն, ինչի մասին գովազդում չի նշվում: Հանձնաժողովը դա որակեց որպես անբարեխիղճ մրցակցության դրսեւորում, ինչի համար ընկերությունը տուգանվեց նախորդ տարվա հասույթի 1 տոկոսի չափով:**

# Գերիշխող դիրքը չարաշահել է նաեւ «Հայջրմուղկոյուղին»

**«Ապակեմեկուսիչ» ընկերությունը դիմել էր տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, հայտնելով, որ «Հայջրմուղկոյուղին» անհիմն կերպով ջրազրկել է իրենց կազմակերպությանը: Ընկերությունը նշել է, որ «Հարավային» մասնաճյուղի «Սեւան» տեղամասի կողմից իրենց ներկայացվել է 2012-ի մայիս ամսվա ջրի ծախսը, որը կազմում է 1272 խմ, այն դեպքում, երբ, սկսած 2005-ից, ընկերության միջին ամսական ծախսը չի գերազանցել 40-50 խմ: Պարզվել է, որ վերոնշյալ խնդիրն առաջացել է ցանցում առաջացած վթարի հետեւանքով: Սակայն, առանց պարզելու վթարի հետեւանքները, «Հայջրմուղկոյուղին» ապամոնտաժել է ընկերությանը պատկանող հաշվիչը, քանի որ վերջինս չի վճարել 1272 խմ ջրի դիմաց:**

**Հանձնաժողովի ուսումնասիրություններից պարզվել է, որ դադարեցնելով ընկերության ջրամատակարարումը, «Հայջրմուղկոյուղին» թույլ է տվել գերիշխող դիրքի չարաշահում: Հանձնաժողովի որոշմամբ «Հայջրմուղկոյուղին» պարտավորվել է տեղադրել նոր հաշվիչ եւ վերականգնել ընկերության ջրամատակարարումը: Ընկերությունը ընդունել է սխալը եւ պարտավորվել սեղմ ժամկետներում լուծել խնդիրը, ինչի պատճառով էլ հանձնաժողովը սահմանափակվեց միայն նախազգուշացում տալով:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 4.6.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: